№ 49 Մարտի 25 (Ապրիլի 6) 1880 Մարտի 25 (Ապրիլի 6) № 49

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջին գաւառական լրագիր։—Ներքին տեսութիւն։ Մի նկատողութիւն։ Նամակ Շուշուց։ Ներքին լուրեր։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Խենթը։

ԱՌԱՋԻՆ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Ինչքան տարի շարունակ մենք յորդորում էինք մեր գաւառացի ինտելիգէնցիային հիմնել մեր Ադրկովկասի գլխաւոր հայաբնակ քաղաքներում գաւառական թերթեր հայերէն լեզուով։ Մենք յայտնում էինք մեր միտքը թէ ինչ պրոգրամայով պէտք է հրատարակվեն այդ տեսակ գաւառական լրագիրները։ Ուրիշ կողմից մենք մի գործնական դժուարութիւն էինք գտնում միայն, այն է որ գաւառական քաղաքներում ցէնզորներ չը լինելու պատճառով, լրագրի նիւթերը պէտք է ուղարկվեն Թիֆլիս և այդ պատճառով լրագիրը միշտ կուշանայ, կամ անկարող կը լինի հրատարակվել։

Այժմ ուրախ ենք որ վերջապէս իրագործվեցաւ առաջին գաւառական հայոց թերթ Ադրկովկասում։ Դա պ. Վասակ Պաչանեանի խմբագրութեամբ Երևան քաղաքում հրատարակվող «Պսակ» շաբաթաթերթն է։ Ուրախ ենք, նոյնպէս, որ կառավարութիւնը նշանակել է Երևանում մի առանձին աստիճանաւոր լրագիրը քննելու համար. այսպիսով կը հեշտանայ լրագրի հրատարակութեան գործը և «Պսակի» խմբագրութիւնը հարկաւորութիւն չի ունենայ ուղարկել իր նիւթերը Թիֆլիսի ցէնզորական մանտաժողովի քննութեանը, որ ոչ թէ միայն շատ կը դժուարացնէր, բայց և անհնարին կանէր լրագրի հրատարակութիւնը։

Բայց ի՞նչ կը լինի ինքն «Պսակ» լրագիրը,—դեռ որոշ կերպով ոչինչ չենք կարող ասել։ Երդեօ՞ք իր ուղղութեամբ կը համապատասխանի նա գաւառական թերթի պահանջին....

Գաւառական թերթի գլխաւոր նպատակը պէտք է լինի ըզբաղվել նոյն իսկ այն գաւառի ներքին, տնտեսական, հասարակական, մտաւոր, օրական հարցերով, որտեղ նա հրատարակվում է։

Այդ է, երկու խօսքով, գաւառական թերթի բուն նպատակը, դորա մէջն է և պէտք է լինի գաւառական թերթի ամբողջ պրոգրամը։ Գաւառական թերթերը պէտք է լինեն այն փոքրիկ գետակները, որոնք ընկնելով մեծ գետի մէջ, մնունդ են տալիս այդ վերջինին, աւելացնում են նրա նիւթը....

Ինչքան գիտական, խելօք, ուսումնական, հանճարեղ իրան համարէր գաւառական թերթի խմբագիրը, քանի որ նա յանձն է առել գաւառական թերթի խմբագրի համեստ պաշտօնը, նա պէտք է իր պաշտօնը ճշդութեամբ կատարի, չը դուրս գայ իր յանձն առած դերից և չերևակայի իրան, որ ինքն է մեծ գետը, որի մէջ ընկնելու են միւս փոքրիկ գետակներն ու աղբիւրները։

Ի՞նչ կասէիք դուք այն մարդու մասին, որ յանձն առնելով, թէև շատ յարգելի, բայց այնու ամենայնիւ համեստ գործ՝ մի գիւղում տարրական ուսումնարան հիմնելու և կառավարելու, յայտնէր, որ այդ իր նոր հիմնած դպրոցը պէտք է դառնայ բարձրագոյն մի դպրոց, պէտք է դառնայ համալսարան....Անշուշտ դուք կը ծիծաղէիք այդ տեսակ մարդու մասին....

Ուրիշ բան է որ ինքն խմբագիրը կարծում է իրան շատ գիտնական, շատ հանճարեղ և բոլոր միւս խմբագիրներից բարձր,—բայց այնու ամենայնիւ իր յանձն առած դերը նրան ստիպում է համեստութեամբ գործը առաջ տանել։ Գաւառական թերթը չէ կարող յանդգնել վճռել ընդհանուր հարցեր. այդ տեսակ գործ պէտք է իր անմիջական նպատակներից դուրս լինի։ Գաւառական, գիւղական դպրոցը երբէք չէ կարող համալսարանի, կամ մինչև անգամ միջնակարգ դպրոցի դերը խաղալ, թէև այդ տեսակ դպրոցի տեսուչը գուցէ և հաւատացած է որ մի չար բաղդ նրան ստիպում է ապրել գիւղում և կառավարել մի գիւղական դպրոց, եթէ ոչ նա կարող էր լինել Բերլինի համալսարանի պրոֆէսսոր....

Ինչ կը նշանակի հրատարակել մի գաւառական թերթ «Պսակ» վերնագրով և իր առաջին համարի մէջ յայտնել մի այդ տեսակ ինքնահաւան միտք. «Մեր լրագիրը կը լինի ժամանակի օրագրութիւն. նա կընդունի իր մէջ ինչ որ ժամանակի ալիքները կը բերեն, կը հասցնեն նրան։ Նա

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ Վ. ԵՐԶԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Ի.

Վարդանը ամբողջ օրը ձիով ման եկաւ, անցաւ մի քանի գիւղեր, ամեն տեղ որոնելով պ. Դուդուկչեանին։ Նրա հարցուփորձին պատասխանում էին, թէ, այո, տեսել են մի երիտասարդ երկայն կօշիկներով, եւրոպական հագուստով, լայնեզերեայ սև գլխարկով, ահագին գաւազանը ձեռին և տետրակներով լի պայուսակը կշտից քարշ գցած։ Եւ ամեն բերնից լսվում էր մի և նոյն կարծիքը, թէ նա խենթ էր։

Երեկոյեան Վարդանը վերադարձաւ Ծերունի Խաչօի տունը առանց գտնելու թափառաշրջիկ երիտասարդին։

Ծերունի Խաչօի հովիւներից մէկը պատմեց Վարդանին, թէ նա տեսաւ երիտասարդին հարեւան գիւղում, և թուրք գիւղացիքը հաւաքված, նրան ծեծում էին. ինքը ճանաչեց, որ ծեծվողը իր աղայի հիւրն էր և ազատեց կատաղած գիւղացիների ձեռքից։

«Ես մի այսպիսի բան ապասում էիւ... ասաց Վարդանը ինքն իրան, և դառնալով դէպի հովիւը, հարցրեց.

—Ի՞նչու համար էին ծեծում։

—Ես չը հասկացայ, պատասխանեց հովիւը,—ուզում էի նրան աւանակի վրա դնել, և տուն բերել, բայց չընդունեց, ասաց, ես իմ ոտով կարող եմ գալ։ Ի՞նչ կը դայ, ոսկորների մէջ մի հատ էլ ողջ չի մնացել։

Այդ լուրը չատ տխրեցրեց Վարդանին. նա գիտէր, թէ ինչ բան է թուրք գիւղացու մուչին, մանաւանդ երբ գործ է դրվում խեղճ հայի մարմնի վրա։

—Ո՞րտեղ թողեցիր նրան, հարցրեց հովիւից։

—Կէս ճանապարհի վրա։ Օրօրվելով գալիս էր։

Դեռ օդայի մէջ ճրագը նոր էին վառել, երբ յայտնվեցաւ պ. Դուդուկչեանը, յոգնած, և ոտքից ցդլուխ ցեխոտված։ Վարդանը սպասում էր, որ նա իսկոյն կը սկսէ պատմել գիւղացիների կոպիտ վարմունքը իր հետ, բայց այդ մասին նա ոչինչ չը խօսեց, միայն նրա դէմքի վրա նկարված էր սաստիկ յուսահատութիւն դառն ատելութեան հետ։

Նա անցաւ, և թեք ընկնելով, պառկեց օդայի մի կողմում, թեքը դնելով բարձի վրա։

—Դուք կարող էք տալ ինձ մի փոքր ծխախոտ խնդրեց նա Վարդանից։—Իմը սպառվել է։

—Իսկոյն, պատասխանեց Վարդանը և ծխախոտի տուփը տուեց նրան։

Նա դողդոջուն ձեռքով չինեց մի պապիրոս և սկսեց ծխել։

—Կատարեալ սփինքս է, կատարեալ հանելուկ է այդ ժողովուրդը, խօսեց նա ինքն իրան,—հա մըտածիր, հա քննիր, դարձեալ չես կարող ճանաչել։ Նա կամ պատմութիւն չունի, կամ պատմութեան մի տգեղ, մի այլանդակ արտադրութիւնն է...։

Նա լռեց, անդադար թողնելով իր բերնից պապիրոսի թանձր ծուխը։ Կարծես, նրա հետ աշխատում էր ցրվել սրտի վրա ծանրացած թախծութիւնը։

Վարդանը նոյնպէս լուռ էր։ Եւ խորին կարեկցութեամբ նայում էր այդ եռանդով լի երիտասարդի վրա, որ երևում էր նրան, որպէս մի անփորձ թիթեռնիկ, որ խաղում է ճրագի հետ և իր անզօր թեւիկների չարժումով աշխատում է հանգցնել նրա բոցերը...։

Նոյն միջոցին ներս մտաւ Ծերունի Խաչօն և քանի րոպէից յետոյ, ամեն գիշերվայ սովորութեան համեմատ, հաւաքվեցան նրա որդիները։ Թէև արևի մանելուց դեռ մի ժամ էր անցել, բայց ընթրիքը չուտ տուեցին, որովհետև, իբրև մշակ մարդիկ, նրանք պէտք է չուտ ուտէին, չուտ քընէին և առաւօտեան վաղ վեր կենային։

Ընթրիքի ժամանակ պ. Դուդուկչեանը բաւական խմեց և նրա սրտի տխուր տրամադրութիւնը փոքր ինչ ուրախ կերպարանք ստացաւ։ Նա մինչև անգամ երգեց «Տէր կեցո՛ զու. զհայս Թաղիադեանցի նշանաւոր երգը։ Երբ սեղանը հաւաքեցին, նա դարձաւ Ծերունի Խաչօին, ասելով.

—Հրամայեցէք օդայի դռները փակեն և մեզ չը խանգարեն, ես մի առանձին խօսելիք ունեմ։

Ծերունին զարմացաւ, թէ ինչ առանձին խօսելիք պիտի ունենայ, և ասաց որդիներից մէկին, որ դռները փակեն։ Բոլորը լռութեամբ սպասում էին նրա խօսքին։

—Շուտով կը հրատարակվի պատերազմ ռուսների և թուրքերի մէջ։—Գիտէք այդ բանը, հարցրեց նա։

—Մենք ոչինչ չենք լսել այդ մասին, պատասխանեցին նրան Ծերունին և իր որդիները։

—Ես գիտեմ, ասաց Վարդանը,—մեր կողմերում ռուսները սաստիկ պատրաստութիւններ էին տեսնում։

Այդ լուրը կայծակի նման հարուածեց խեղճ Ծերունուն։ Նա իր կեանքում մի քանի անգամ տեսել էր ռուսների և թուրքերի մէջ եղած պատերազմները և դեռ չէր մոռացել նրանց սարսափելի հետևանքները հայերի վերաբերութեամբ։ Իսկ Հայրապետը այժմ հասկացաւ քուրդ տիկնոջ մի քանի օր առաջ Սառային հաղորդած խօսքերի գաղտնիքը, թէ ինչ նպատակի համար էր պատրաստում Ֆաթթահ-բէկը իր հեծելազօրքը։

—Այո՛, պատերազմ կը լինի, խօսեց Վարդանը մի առանձին հեգնութեամբ.—«ձին և ջորին պիտի կռուեն, իսկ մէջտեղում էշը կը սակի»...։

—Այդպէս է, ասաց Ծերունու մեծ որդին՝ Հայրապետը,—մեր կողմերի հայերը կը տրորվեն, կը ոչնչանան պատերազմի փոթորիկի մէջ։

—Այդ ես էլ գիտեմ... պատասխանեց Ծերունին և նրա ձայնը խեղդվեցաւ սրտի կսկիծից։

—Լսեցէք, ասաց պ. Դուդուկչեանը։—Նա աշխատում էր այս գիշեր իր խօսքերը աւելի ամրացնել և նրանց աւելի հասկանալի ձև տալ։—Այս պատերազմը մինչև այսօր Թուրքերի և ռուսների մէջ եղած միւս պատերազմների նման չէ, դա բոլորովին ուրիշ միտք և ուրիշ նպատակ ունի։ Դուք լրագրեր չէք կարդում, ի հարկէ, չէք կարող գիտենալ, թէ այժմ ինչ է գործվում աշխարհի մի ուրիշ մասում, որին կոչում են Բալ-

կը լինի մի ընդհանուր ընդունարան, և այլն։»

Ուրեմն պ. Պապաջանեան դիտաւորութիւն չունի հրատարակել մի գաւառական թերթ, այլ Երևանից, որտեղ ոչինչ մնաւոր կեանք չը կայ, դիտաւորութիւն ունի հրատարակել մի ընդհանուր հայոց թերթ....

Ինչքան պ. Պապաջանեան իրան հանճարեղ մարդ կարծէր, նրան անհնարին կը լինի Երևանից որ և է ընդհանուր հարցեր վճռել։ Տեղափոխեցէք մի ամենագիտնական պրոֆէսորին, մի ամենաընդունակ պուբլիցիստին մի մեծ քաղաքից մի գաւառական քաղաք,—նրան անհնարին կը լինի նոյն նշանակութիւն ունենալ, ինչ որ նա ունէր մայրաքաղաքում։

Թող Էմիլ-դը-Ժիրարդէն փորձի Մարսէյլի կամ Մոնպելիէի մէջ հիմնել մի մեծ թերթ, որ նոյն կշիռ ունենար ինչպէս Փարիզում հրատարակված նրա «Liberté» կամ «France» լրագիրներն ունէին,—և նա կը տեսնի որ այդ նրան անհնարին կը լինի։

Գուցէ Գերմանիան այդ կողմից բացառութիւն է կազմում ամբողջ աշխարհից. այդ երկրում Կեօլնի կամ Աուգսբուրգի պէս համեմատաբար աննշան քաղաքներում հրատարակվում են այնպիսի լրագիրներ, որոնք նոյնքան և գուցէ աւելի մեծ ազդեցութիւն ունեն երկրի հասարակական կարծիքի վրա, քան թէ մայրաքաղաքում, Բերլինում հրատարակվող լրագիրները։ Գերմանիայում, ութ կամ տաս հազար բնակիչ ունեցող քաղաքում համալսարանը շատ անգամ աւելի հռչակված է քան թէ նոյն երկրի մայրաքաղաքի համալսարանը։ Այդ այն պատճառով է, որ Գերմանիայի իւրաքանչիւր իշխանութիւն, իւրաքանչիւր նահանգ, գաւառ կամ քաղաք դարերով ապրել են իրանց ինքնուրոյն, անհատական կեանքով։

Մեզանում և ոչ մի երկրում այդպէս չէ։ Ցանկալի է որ «Պըսակը» և նրա օրինակին հետևողները, հասկանային իրանց համեստ կոչումը։

Վատ չէր լինի աւելի համեստ կերպով սկսել գործը. գաւառական թերթը պէտք է միմիայն գաւառական շահերը պաշտպանի, գաւառական գործերով և հարցերով զբաղվի։

Ինչ են նշանակում «Պսակի» առաջին համարի առաջնորդող յօդուածի մեծ մեծ ֆրազները....Ի՞նչ կը նշանակի հրատարակել մի գաւառական լրագիր «Պսակ» վերնագրով։ Մի՞թէ կարելի է այդքան քիչ համեստութիւն ունենալ կարծելու համար որ իր լրագիրը բոլոր հայ լրագիրների պսակը կը լինի։ Ի՞նչ կը նշանակի գաւառական թերթին այդտեսակ պրոգրամ տալ՝ մանկավարժական և պատմական։ Եթէ գաւառական լրագիր է՝ հրատարակում, պէտք է գաւառական լրագրի պրոգրամ տաք նրան, և նպատակ չը դնէք ձեզ ընդհանուր հարցեր վճռելու։ Աւելի լաւ կը լինէր, եթէ պ. Պապաջանեան այդտեսակ վերնագիր տար իր լրագրին. «Երևանի թերթ», լրագիր գաւառական։ Եւ այդ վերնագրին համեմատ իր լրագրի պրոգրամն էլ որոշէր ու գծագրէր։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

—

Վերջին ժամանակներս Թիֆլիսում հրդեհները այնքան յաճախակի են պատահում, որ ամենախաղաղ անձանց անդորրութիւնն անգամ վրդովում և ենթարկում են նրանց կասկածանքի, թէև նրանք ամենափոքր արատից անգամ ազատ լինէին։ Մանաւանդ որ զարմանալի է, տեղական ռուս և վրաց հրատարակութիւնները աւելի են հակամիտ դէպի այս դիւրահաւատութիւնը։ Նրանք առանց հատու լինելու իսկութեանը, առանց հետազօտելու տեղի ունեցած պատահարի բոլոր կողմերը, մանաւանդ մինը միւսից առնելով և առաջինի վրա մի բան ևս աւելացնելով, մի կողմնակի գործին անխառն մարդու խսպառ մեղադրում, երբեմն բանտարկում ևս են, և եթէ այս առարկայ եղած անձնաւորութիւնը իրան պաշտպանելու վստահութիւն չունենայ, կամ իսկապէս ասած փոքր ինչ անտարբեր ճնայ, շուտով և կախաղանի կարժանացնեն նրան։

Խօսքիս ապացոյց կարող է լինել ամսոյս 9-ին պատահած հրդեհը Միքայէլեան կամուրջի վրա։ Կրակը յայտնվելով եղբարց Ա-բովեանների մագազինում, այրեց ամբողջ խանութը իր երկու նկուղներով. այրեց նմանապէս և նրան կից մրգավաճառի խանութը։ Տեղական հրատարակութիւնները փոխանակ իսկական պատճառով հետաքրքրվելու, որին մենք հետամուտ լինելու ոչ կամք ունենք և ոչ կարողութիւն, մեղադրեցին մեզ, որ իբր թէ մենք ենք յանցաւորը, չը բաւականացած դրանով, ի վերջոյ և բանտարկած հրատարակեցին մեզ։

Այդ անստոյգ տեղեկութեան արմատական խմորը «Կովկասը» հանդիսացաւ, որը ոստիկանութեան իրեն հաղորդած տեղեկութիւնը նաղդի ընդունելով, առանց խնդրութիւնը ըստուգելու, հրատարակեց, ոչ իբրև ենթադրութիւն, այլ որպէս հաստատ իրողութիւն։ Բայց սա պատիւ չէ բերում ոչինչ հրատարակութեանը։

Եթէ մի պօլիցիական պրիստաւ ենթադրում է որ կրակը պատճառված լինի մեր ֆոտոգրաֆիական գործարանից, դա հաստատութիւն չէ, ինչպէս և այն ևս հաստատութիւն չէ, եթէ ես (անգամ) ասեմ, որ պրիստաւն ևս այդպէս հաւատացնելով իր որոշ նպատակն է ունեցել. ամեն մի գործ կամ խնդիր իր հաստատուն փաստերը պէտք է ունենայ և իւրաքանչիւր մի այդպիսի ծանրակշիռ հարց պարզելու համար կան օրէնքներ, քննիչներ և դատարաններ, որոնց միջոցով պէտք է զանազանել և երևան հանել ստոյգը անստոյգից, ինչպէս և անպարտը պարտաւորից։ Բայց քանի որ ոչոքի յայտնի չէ, ինչպէս և մեզ, թէ որ քննիչը, երբ և որ դատարանի միջոցաւ է մեզ յանցաւոր ճանաչած, իսկ մի խմբագիր հրատարակում է մեզ յանցաւոր, դա դէպի չարն է գործ դնում իր սուրբ պարտականութիւնը։ Սա պատիւ և կեանքի խնդիր է. հանաք չէ....

Մեր գործարանում կրակի հետք անգամ չէ երևացած, բացի այդ այրվող խանութները բաժանվում են մեզանից մի բաւական նաչափ լայն կօրիդօրով։ Իսկ եթէ յիշեալ գործարանը ենթարկվեց վտանգի կորստեան կամ կողոպտման մատնվելով, այդ էլ նոյն պօլիցիականին յատուկ թուլութեան շնորհիվ, ինչպէս և ինքն խոստովանվեց ապահովացնող ընկերութեանց գործակատարների առաջ, սակայն և որի ենթադրութիւնը, որ իբր թէ կրակը մեր գործարանից պէտք է պատճառած լինի, նոյն գործակատարների իւրաքանչիւր մի լսողի և տեսնողի ծիծաղ է շարժում։

Մենք մեզ մեղադրված չենք համարում և չենք էլ կարող թոյլատրել ուրիշին այդպիսի հեշտութեամբ արատաւորել մեր պատիւը։ Բայց ով իրան իրաւունք է համարում, թող կամ յայտնի ապացոյցները հաստատի, կամ պարտք համարի ինքեան հրապարակաւ ուղղել իր սխալը, ջնջելով այն արատը, որ անիրաւացի կերպով բարդած է մեզ վրա։

Գ. Տէր-Ղևոնդեանց

կանեան թերակղզի։ Այնտեղ նոյնպէս կան քրիստոնեայ ազգեր, որոնք այսուհետև հայերի նման թուրքաց հպատակներ են, և որոնք այստեղի հայերի նման դարերով տանջվում էին թուրքերի բարբարոսութիւնից։ Բայց նրանք հայերի նման համբերել չը կարողացան, ապստամբվեցան, և ահա մի տարուց աւելի է, որ կռվում են թուրքերի հետ նրանց լծից ազատվելու համար։ Ցաղթեցին, յաղթվեցան, սարսափելի զոհաբերութիւններ արեցին, վերջը ռուսները մէջ մտան, և քրիստոնէից ազատութեան անունով, նրանց պաշտպան հանդիսացան։ Կ. Պոլսում եւրոպական պետութիւնների ներկայացուցիչները ժողով կազմեցին, որ այդ ճնչված քրիստոնեայ ազգերին մի քանի արտօնութիւններ, մի քանի իրաւունքներ տային, բայց համաձայնութիւն չը կայացաւ և խորհուրդը մնաց առանց հետևանքի։ Այժմ ռուսները կամենում են սրի ուժով ընդունել տալ թուրքերին այն, ինչ որ նրանք չը համաձայնվեցան ընդունել իրանց հպատակ քրիստոնեաների ազատութեան մասին։

Այդ անցքերի պատմութիւնը, թէև այն ժամանակ աշխարհի ամենախուլ անկիւններում անգամ տարածվել էր, բայց հայ գիւղացիների համար բոլորովին նորութիւն էր. նրանք ոչինչ չէին լսել, և այդ պատճառով զարմացած լսում էին պ. Դուդուկչեանի խօսքերը։ Հայ գիւղացին իր հօրիզոնից դուրս, իր գաւառի միւս կողմում չը գիտէ, թէ ինչ է կատարվում։ Նրանք այսքանը միայն լսել էին, թէ թուրքերը ինչ-որ պատերազմ ունեն, բայց թէ ում հետ է և ինչ բանի համար է պատերազմը,—այդ մասին տեղեկութիւն չունէին։ Եւ թուրքերի պատերազմ ունենալը յայտնի էր նրանց այն առիթով միայն, որ հարկերը խստութեամբ պահանջում էին և աւելի շատ էին առնում քան թէ առաջ, անդադար կրկնելով, թէ ճիմայ տէրութիւնը պատերազմ ունի, պէտք է օգնէ քեզ։

—Ռուսների այժմեան պատերազմը թիւրքիայի հպատակ քրիստոնեաների ազատութեան համար է, շարունակեց պ. Դուդուկչեանը։—Բայց պէտք է գիտենաք, որ թիւրքիայի աւելի տանջված, աւելի հարստահարված քրիստոնեայ հպատակը հայն է։ Այդ դուք ինքներդ լաւ էք իմանում, որովհետև ձեր անձի վրա փորձել էք թուրքի ամեն տեսակ բարբարոսութիւնները։ Ուրեմն ժամանակ է, որ հայերն էլ մտածեն իրանց հանգստութեան համար։

—Մենք ինչ պիտի մտածենք, պատասխանեց Ծերունի Խաչօն,—դուք ինքներդ ասում էք, թէ ռուսները պատերազմելու են քրիստոնեաների ազատութեան համար. Աստուած յաջողութիւն տայ, նրանք կը դան և մեզ էլ կազատեն։

—Այդ իրաւ է, միայն մի բան կայ, մէջ մտաւ Վարդանը,—ասում են, «մինչև տաղն լաց չը լինի, մայրն էլ ծիծ չի տայ»։ Հայերը իրանց լռութիւնով, իրանց համբերութիւնով և իրանց մեծայոյս սպասելով ոչինչ չեն ստանայ։ Հայերը պէտք է բողոքեն։

—Այո՛, պէտք է բողոքեն, կրկնեց պ. Դուդուկչեանը,—և այդ բողոքը պէտք է յայտնվի նոյն ձևով, որպէս յայտնեցին միւս քրիստոնեայ ազգերը։

—Ուզում էք ասել, թէ հայերն էլ պէտք է կռուեն... նրա խօսքը կտրեց Ծերունին։

—Այո՛, այդ եմ ուզում ասել։ Հիմայ աշխարհի կարգն այդպէս է, և միշտ այդպէս է եղել, ով որ զէնք գործածել չը գիտէ, ով որ արիւն թափելու և մարդիկ կոտորելու ընդունակութիւն չունի, նրան ասում են՝ դու ազատ լինելու իրաւունք չունես։ Ուրեմն, եթէ հայերը ցանկանում են մի բան ստանալ և ազատ լինել, պէտք է ցոյց տան, թէ իրանք ևս զուրկ չեն քաջութիւնից, թէ իրանք ևս սպանել գիտեն։ Եւ այժմ ամենայարմար ժամանակն է։

Ծերունին մի դառն ժպիտ գործեց իր խորշոմած դէմքի վրա, պատասխանելով.

—Օրէնած, ինչով պէտք է ցոյց տան, թէ քաջութիւն ունեն, կամ սպանել գիտեն։ Թուրքերը հայերի մօտ մի դանակ անգամ չեն թողել, որ հարկաւորած ժամանակ մի հաւի վիզ կըտրեն։

Պ. Դուդուկչեանը դժուարացաւ պատասխանել։ Վարդանը ասաց.

—Զէնքեր, որքան կամենում էք, ես կը տամ ձեզ, միայն կաւողներ լինէին։ Զեզ յայտնի է իմ պարապմունքը, ես կանտրապանդիստ եմ, ինձ ծանօթ են բոլոր անցքերը, բոլոր դաղտնի ճանապարհները այստեղ զէնքեր անցկացնելու համար։

—Միայն զէնքը բաւական չէ, խօսեց խոհեմ Ծերունին,—դուք կարող էք տալ այստեղի հայերին այն սիրտը, այն քաջութիւնը, որ ունեն միւս քրիստոնեայ ազգերը, որոնք այժմ պատերազմում են իրանց ազատութեան համար։ Զէնքը ինչ գործ կարող է կատարել մի ստրկացած ժողովրդի ձեռքում։

—Հէյտ չէ այսպէս դատել ժողովրդի վրա, տանուտէր Խաչօ, խօսեց պ. Դուդուկչեանը,—մեր ժողովուրդը բոլորովին չէ կորցրել ոչ իր սիրտը, ոչ քաջութիւնը և ոչ ազատութեան դգացմունքը։ Մի չարժառիթ, մի յարմար ժամանակ պէտք է, դրանք յայտնվեն նրա մէջ։ Այժմ ամենայարմար ժամանակն է։ Ռուսները պիտի պատերազմեն թուրքերի հետ, թող հայերն էլ մի կողմից զենք բարձրացնեն։ Ես հաւատացած եմ, որ ռուսներ ամեն կերպով կօգնեն մեզ։

Ծերունի Խաչօի որդիները բոլորովին լուռ էին և ոչինչ չէին խօսում։ Նրանցից մէկը, որ կոչվում էր Ցակօ, որն իր եղբայրների հետ մի չարաթ առաջ ունեցած խորհրդի մէջ յայտնեց այն միտքը, թէ լաւ է, որ իրանց քոյրը Լալան քուրէկի կինը լինի, որովհետև դրանով կը վայելի իրանց հզօր փեսայի պաշտպանութիւնը,—Ցակօն, որ խորին տհաճութեամբ լսում էր նրա հօր և նրա երիտասարդ հիւրերի խօսքերը, դիմեաց դէպի պ. Դուդուկչեանը, ասելով.

—Եղբայր, քեզանից արեան հոտ է դալիս, մենք ոչ քո չարն ենք ուզում, ոչ քո բարին. էգուց ռուսաստան չուտ վեր կաց, բանը—մանդ հաստատ, և հեռացիր մեր տնից, թէ չէ, մեր գլխին մի պատուհաս կը բերես....

Ծերունի Խաչօն սատեց որդուն, որ լռեցաւ և ինքը դառնալով պ. Դուդուկչեանին, ասաց.

—Դուք մի նեղացէք իմ որդու խօսքերից, նա չը գիտէ, թէ ինչ է խօսում։ Լսեցէք ինձ, ես ոչ կարդացել եմ և ոչ էլ իմանում եմ, թէ ուրիշ երկրներում ուրիշ ազգեր ինչ են շինում։ Բայց որպէս երկրագործ մարդ, ես մի բան գիտեմ. մենք՝ գիւղացիներս մինչև հողը չենք վարում, չենք փափկացնում և չենք պատրաստում մեր սերմը չենք ցանում. որովհետև գիտենք, որ սերմը չի կանաչի, արմատ չի ձգի, միայն կը ծլի և ինքն իրան կը չորանայ։ Այս բանը Քրիստոս

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

6 մարտի

Մեր շուշեցի հայ օրիորդները զգալով և ականատես լինելով, որ առանց իգական սեռի օգնութեան ոչինչ չէ կարելի անել և արածն էլ միշտ թերի է լինում, վերջապէս յօժար կամօք համաձայնվեցան իրենք ևս ժամանակի պահանջման համեմատ իրենց պարտքերը կատարել։ Նոքա ըսկսեցին այդ իրենց մտադրութեան հիմը դնել մի նշանաւոր օր։ Այդ օրը նոքա ընտրեցին Վարդանանց սուրբ տօնը։ Արդէն տան և հինգ օր առաջ սկսել էին պատրաստութիւն տեսնել, անմահ Վարդանանց յիշատակը չքեղ հանդէսով կատարելու համար։ Նախ եկեղեցում կատարեցին հոգեհանգիստ, ուր ներկայ էին հոգևոր դպրոցի աշակերտները, աշակերտուհիները և ուսուցիչները։ Եկեղեցում հոգեհանգստից յետոյ կարդացուեցան մի քանի ճառեր և յետոյ երգեցին տօնի վերաբերեալ մի քանի ազգային երգեր։ Իսկ երեկոյեան հոգևոր օր. դպրոցի բարձր դասատան աշակերտուհիները տիկին Ղումաչ Թառումեանի տանը մի մանկական երեկոյ տուին յօգուտ Վանայ սուվելոց։ Երեկոն սկսվեց թատրօնական ներկայացումով և վերջացաւ ճառով, երգերով և պարերով։

Այս առաջի անգամն էր, որ Շուշում իգական սեռը հայերից բեմ էր դուրս գալիս, այդ պատճառաւ ամենքն էլ ի բոլոր սրտէ ցանկանում էին ներկայ գտնվել։ Բայց դահլիճը փոքր լինելով, հանդէսին ընտանեկան ձև էին տուել։ Ներկայացրին «Բարի սիրտ» և «Որդիական սէր» պիէսաները։ Ճշմարիտ խոստովանած, պիէսաները շատ անյարմար էին, առաւել ևս «Բարի սիրտը», որին մինչև անգամ կարելի է անճոռնի անուանել։ Բայց ինչպէս տեղեկացանք, օրիորդները ստիպված են եղել այս պիէսաները ներկայացնել, այն պատճառաւ, որ ուրիշ յարմար մանկական պիէսա չեն գտել։

Երեկոն անցաւ բաւականին չքեղ և յաջող. համարձակ կարելի է ասել, որ օրիորդների գեղեցիկ խաղն էր, որ ծածկում էր պիէսաների անհամութիւնը։ Ներկայացմանը մասնակցողներն էին օր. օր. Վարսենիկ Գանձեցեանց, Ոսկի և Կատինկայ Թարվիզեանցք, Կատինկայ Դոլուխանեանց և Մարգարիտինեայ Մաստումեանց, իսկ յուշարարը էր Մարիամ Բահաթուրեանց։ Բոլորիքեանք էլ կատարեցին իրենց դերերը բարեխղճաբար։ Խաղացողներից երկուսը ստացան մի մի ծաղկեայ փունջեր։ Ներկայացումից յետոյ օր. Ռ. Թարվիզեանցը մի գեղեցիկ ճառ կարդաց «Թատրոնի նշանակութիւնը» վերնագրով։

Ցանկալով մատաղ խմբին երկարակեցութիւն և առաջադիմութիւն, վերջացնում եմ նամակս։

Արցախեցի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լսում ենք որ կրակի դէմ ապահովութեան ընկերութիւնների կենտրոնական վարչութիւնները արգելել են արդէն Թիֆլիսի ազէնտներին ապահովացնել կրակի դէմ խանութների ապրանքները։ Արդէն ապահոված ապրանքները, ի հարկէ, ապահոված կը մնան մինչև ապահովութեան ժամանակի լրանալը, բայց նոր ապահովութիւնների ընդունելը արգելված է։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ նուիրատուների ցուցակի մէջ յօգուտ Վանի սուվելոց, որ տպվեցաւ «Մշակի» № 48 մէջ, մտաւ մի սխալ։ Պ. Վահրամեանի տան մէջ հաւաքվեցաւ ոչ թէ 19 ր., այլ 91 բուբլ։

—

Մայրաքաղաքի ռուս լրագիրները լսել են որ բարձր կարգադրողական յանձնաժողովի անդամներ ընտրվեցան հետևեալ անձինք. իշխան Լիվէն, պ. պ. Մարկով, Պէրֆիլիեվ, Կօխանով, Կովալէվսկի, Սօլսկի, Բոբրիկով, Բատիանով և Զէրէվին։ Յանձնաժողովի նախագահ, կոմս Լորիս-Մէլիքով ժամանակաւորապէս հրաւիրում է յանձնաժողովի նիստերին, քաղաքային գործերի կարգադրելու վերաբերութեամբ, Ս. Պետերբուրգի Դումայի անդամներին։ Լսվում է որ և Մոսկվայի և Ռուսաստանի ուրիշ մեծ քաղաքների քաղաքային վարչութիւնների ներկայացուցիչները ժամանակ առ ժամանակ կը հրաւիրվեն յանձնաժողովի նստերին։ Նոյնպէս հաղորդում են որ Ս. Պետերբուրգի և Մոսկվայի ազնուապետական դասի ներկայացուցիչներ կը հրաւիրվեն մասնակցել յանձնաժողովի մի քանի աշխատանքներին։ «Новое Время» լրագիրը լսել է, որ բացի մեծ քաղաքների քաղաքային վարչութիւնների ներկայացուցիչներից, կը հրաւիրվեն բարձր կարգադրողական յանձնաժողովի նստերին ներկայ գտնվել և Ռուսաստանի այլ և այլ տեղերի զէմստվոների (նահանգական ինքնավարութեան) ներկայացուցիչները։

—

Այսօր, երեքշաբթի, մարտի 25-ին, ժամը 12-ին կատարվելու է «Կենդանիների հովանաւորութեան» ԹԻՖԼԻՍԻ ընկերութեան հիւանդանոցի բացումը։ Հիւանդանոցը գտնվում է Սաղի վրա, Դվրիտի-Շվիլիի տանը։

—

ՄԵԾ-ՂԱՐԱԲԼԻՍԱՑԻՑ մեզ գրում են մարտի 15-ից։ «Այսօր դեռ ձիւնով պատած են բոլոր դաշտերը։ Երկրագործ դասը անասունների կերակուրի կողմից մեծ նեղութեան մէջ է։ Ուրիշ տարիների մարտի սկզբներին գիւղացիները արդէն արտերը վարում էին, իսկ այս տարի մինչև ամսի վերջը հազիւ թէ սերմ ընկնի դաշտը։ Լսում ենք, թէ անօրէնութիւն է լինում աղքատ երկրագործներին կառավարութեան կողմից սերմացու տալ։»

—

Անդրէաս Արծրունի գրում է մեզ Բերլինից հետևեալը։ «Ստրասբուրգի մի հայ ուսանող, պ. Արասխանեանց, գրում է ինձ որ նա այնտեղ դիտաւորութիւն ունի հաւաքել իր գերմանացի ծանօթներից նուիրատուութիւններ յօգուտ Վանի սովատանջների և ինձ էլ առաջարկում է նոյնը փորձել և Բերլինում։ Ես ինքս էլ նոյն դիտաւորութիւն ունէի արդէն, բայց հաւատ թէ դա ինձ աջողվի։ Գուցէ Էլզաս-Լոթարինգիայում այդ տեսակ հանդանակութիւն կարող է աջողվել, բայց այստեղ դա դժուար իրագործելի բան է, որովհետև ամեն կողմից պատասխանում են թէ իրանք էլ այստեղ և այնտեղ պիտի փողեր նուիրեն։ Ճշմարիտ է մեծ գումարներ են նուիրվում այստեղ թէ Սիլէզիայի սովատանջների համար և թէ նոյն իսկ Բերլինի կարօտեալների ու չքաւորների օգտին։ Այստեղ չեղած բան է, որ այսքան բազմաթիւ անձնասպանութիւններ պատահէին, ինչպէս վերջին ժամանակները պատահում են սովից, կամ աշխատանքի բացակայութենից։ Եւ եթէ այստեղ ամեն տեսակ ստորագրութիւններ են շրջում, հասկանալի է, որ աւելի կը մասնակցեն իրանց աղքատների օգտին առաջարկվող ստորագրութիւններին, քան թէ նուիրեն մի բան յօգուտ օտար, թէև աւելի դժբաղդ մի երկրի։ Մարդը այնպէս է ստեղծված,—և այդ պատճառով չը պէտք է մեղադրել գերմանացիներին էլ—որ մեծ մասամբ աւելի է խղճում նրանց, որոնց դժբաղդութիւնը ինքն իր աչքով է տեսնում, իսկ չը տեսածը նրա վրա աւելի թոյլ ազդեցութիւն է անում։»

—

Մեզ գրում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ հետևեալը։ «Այս օրերս գաւառիս Ջ. գիւղի բնակիչները դիմեցին գաւառապետին, յայտնելով որ ոչ ցանելու և ոչ ուտելու հաց ունեն, ոչ էլ, վերջապէս, անասունների համար դարման ունեն։ Նրանք աղաչում էին մի ճար անել իրանց անմխիթար վիճակին։ Այդ գիւղը բաղկացած է 84 տնից, որոնցից 40 տուն ունեն միայն ուտելու համար հաց (ցորեն կամ գարի), իսկ 40 տուն ոչ ուտելու և ոչ ցանելու հաց ունեն։ Մնում են միայն 4 տուն, որոնք թէ ուտելու և թէ ցանելու բաւականաչափ հաց ունեն։ Եւ այդ գիւղը բացառութիւն չէ կազմում գաւառիս գիւղերի թւում։»

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են, որ այդ քաղաքի շրջակայ գիւղերից մինի բնակիչը ոչ իր ընտանիքի և ոչ իր անասունների համար կերակուր չը գտնելու պատճառով, մորթում է վերջապէս իր անասուններին և կերակրում է իր զաւակներին առանց հացի, միայն մսով։

—

ՂԱՐԱԲՈՒԼԱՂ գիւղից մեզ գրում են։ «Մեր գիւղացիները, որոնք վերջին ժամանակները հաց չունենալու պատճառով, կերակրվում էին կորեկով, այժմ այդ էլ չունեն։ Եւ ահա, չը նայելով որ մեծ պաս է և լուծելը հայ գիւղացին սրբապղծութիւն է համարում, ստիպված է մորթել իր տաւարը և միսը ուտել։»

—

Մեզ գրում են ԱՍՏՐԱԽԱՆԻՑ հետևեալը։ «Փետրվարի 28-ին, Ս. Վարդանանց տօնի օրը, օրիորդաց դպրոցի դահլիճում հանդէս կատարվեցաւ։ Կարդացվեցան ճառեր և ոտանաւորներ, Աւարայրի պատերազմի համաւօտ նկարագրութեամբ և հոգեհանգիստ կատարվեցաւ դպրոցների նուիրատուների յիշատակին։ Ներկայ էին տեղիս վիճակաւոր առաջնորդը, մի քանի տիկիններ և պարոններ։ Հանդէսը թեթև նախաճաշիկով վերջացաւ։»

—

Մեր աշխատակից բժիշկ Միրիմանեանց գրում է մեզ հետևեալը։ Պրոֆէսսոր Մանասէինից իր շաբաթաթերթի մէջ յայտնած հետևեալ ճիշդ նկատողութիւնը (Врачъ № 8) կարող է ամենալաւ պատասխան լինել այն լրագիրներին, որոնք ծաղրեցին «Մշակի» (№ 4) առաջնորդող յօդուածը Թիֆլիսի ուսանողական ճաշի դէմ։ «Փետրվարի 12-ին, ասում է պրոֆէսսոր Մանասէին, կայացաւ Ս. Պետերբուրգի բժշկական-խիրուրգիական Ակադէմիայի նախկին սաների ճաշը։ Հաւաքվեցան մինչև 170 հոգի և որովհետև ամեն մի մասնակցող վճարում էր 5 բուբլ, ուստի ճաշի ամբողջ արժողութիւնը եղաւ, ամենաքիչը, 850 բուբլ։ Ճշմարիտն ասած, մենք չենք հասկանում այսպիսի ճաշերի նշանակութիւնը. բժշկների միմեանց մէջ անմիաբանութիւնը ճաշերով չէք հեռացնի, իսկ այն զգացմունքը, որ կապում է այն տեղի հետ, որտեղ ուսանող էք եղել, եթէ նա միայն իսկապէս կայ, չէ պահանջում արհեստական կերպով պահպանված լինելու։ Եւ այդ զգացմունքը կարող էր այնու ամենայնիւ արտայայտվել բժշկների արժանաւորութեանը առաւել պատշաճ ձևով. զոհելով մի և նոյն գումարը ոչ թէ խոհանոցական արհեստը խրախուսելու համար, այլ նրանից մի առաւել օգտակարը։»

—

Ստացանք ԵՐԵՒԱՆՈՒՄ պ. Վասակ Պապայանեանի խմբագրութեամբ հրատարակվող «Պսակ» շաբաթաթերթի առաջին համարը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հինգշաբթի, մարտի 20-ին, Ամարային թատրոնում, հայոց թատրոնական խումբը յօգուտ պ. Տէր-Դաւթեանցի տուեց Սունդուկեանցի «Օսկան Պետրովիչը զժոխքում» վոդվիլը և «Կախարդված պրինց» պիէսան։ Հասարակութիւնը լցրել է թատրոնի դահլիճը, Տէր-Դաւթեանցի գեղեցիկ խաղը տեսնելու համար։ Առհասարակ ներկայացումն շատ լաւ անցաւ, որովհետև երկու պիէսաների մէջն էլ գլխաւոր դերերը պ. Տէր-Դաւթեանցն էր կատարում։ Միայն «Օսկան Պետրովիչը զժոխքում» պիէսայի մէջ բացի բենեֆիցիանտից, մնացած բոլորն էլ իրանց դերերը չը գիտէին։ Մէկ բան ևս չէ կարելի չը նկատել, որ մեր դերասանները պրինցների, դուքսերի և կոմսերի դերերի մէջ շատ ծիծաղելի են լինում. նրանք աւելի նըմանվում են կօշկակարներին և կառապաններին, քան թէ վերոյիշեալ մեծ տիտղոսաւոր անձերին։

***

Հինգշաբթի, ապրիլի 27-ին, հայոց թատրոնական մշտական խումբը, Ամարային թատրոնում, մասնակցութեամբ թատրոնասէր պ. Վահան Մամիկոնեանցի կը տայ յօգուտ պ. Սարդարեանցի «Կովէրլէի սպանութիւն» դրաման։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

էլ է ասում իր սուրբ Աւետարանի մէջ, ես շատ անգամ եմ լսել եկեղեցում։ Հիմայ, որդի, հողը պատրաստ չէ։ Ուզում եմ ասել, ժողովուրդը պատրաստ չէ։ Պէտք էր քսան, երեսուն և գուցէ յիսուն տարի առաջ պատրաստել հողը։ Երբ այս նախապատրաստութիւնները կատարված կը լինէին, այժմ ձեր սերմերը բարեբեր երկրի վրա կընկնէին, կը բուսնէին, կը կանաչէին, կաճէին, կը հասունանային և մէկին հարիւր և մէկին հազար պտուղ կը տային։ Ախար մի օրվայ մէջ բան չի դառնայ։ Ախար մենք գիտենք, որ ցանքի վրայից մի քանի եղանակներ են անցկենում, մի քանի տաք և ցուրտ եղանակներ, մինչև հունձքը հասունանում է։ Մենք գիտենք, որ ցանքը համբերում է եղանակների զանազան տեսակ խստութիւններին, երբեմն փոթորիկը նրան հանգստութիւն չէ տալիս, երբեմն կարկուտը ծեծում է և երբեմն ձիւնը սառեցնում է, իսկ երբեմն արեգակի կենսատու ճառագայթները նրան ջերմացնում են,—մի խօսքով, ցանքը հաղար ու մէկ փորձանքների միջից անցնելով, վերջապէս պսակում է երկրագործի բաղձանքը....Այսպէս էլ ժողովրդի սրտի մէջ սերմանած ցանքի վրայից պէտք է անցկենան ժամանակներ, մի քանի խաղաղ և փոթորկալից ժամանակներ, մինչև հունձքը կը հասունանար....

—Շատ գեղեցիկ օրինակ է, պատասխանեց պ. Դուդուկչեանը,—ես բոլորովին համաձայն եմ ձեզ հետ։ Բայց մի ուրիշ բան կայ, այն ևս պէտք է ի նկատի ունենալ։ Ես այժմ ձեզ հետ պէտք է ձեր ձևով՝ երկրագործի և անասնապահի լեզուով խօսեմ, այդ լեզուն աւելի հասկանալի կը լինի ձեզ։—Թողեցէք մի անգամ ձեր տեսակը։ «Ստրասբուրգի մի հայ ուսանող, պ. Արասխանեանց, գրում է ինձ որ նա այնտեղ դիտաւորութիւն ունի հաւաքել իր գերմանացի ծանօթներից նուիրատուութիւններ յօգուտ Վանի սովատանջների և ինձ էլ առաջարկում է նոյնը փորձել և Բերլինում։ Ես ինքս էլ նոյն դիտաւորութիւն ունէի արդէն, բայց հաւատ թէ դա ինձ աջողվի։ Գուցէ Էլզաս-Լոթարինգիայում այդ տեսակ հանդանակութիւն կարող է աջողվել, բայց այստեղ դա դժուար իրագործելի բան է, որովհետև ամեն կողմից պատասխանում են թէ իրանք էլ այստեղ և այնտեղ պիտի փողեր նուիրեն։ Ճշմարիտ է մեծ գումարներ են նուիրվում այստեղ թէ Սիլէզիայի սովատանջների համար և թէ նոյն իսկ Բերլինի կարօտեալների ու չքաւորների օգտին։ Այստեղ չեղած բան է, որ այսքան բազմաթիւ անձնասպանութիւններ պատահէին, ինչպէս վերջին ժամանակները պատահում են սովից, կամ աշխատանքի բացակայութենից։ Եւ եթէ այստեղ ամեն տեսակ ստորագրութիւններ են շրջում, հասկանալի է, որ աւելի կը մասնակցեն իրանց աղքատների օգտին առաջարկվող ստորագրութիւններին, քան թէ նուիրեն մի բան յօգուտ օտար, թէև աւելի դժբաղդ մի երկրի։ Մարդը այնպէս է ստեղծված,—և այդ պատճառով չը պէտք է մեղադրել գերմանացիներին էլ—որ մեծ մասամբ աւելի է խղճում նրանց, որոնց դժբաղդութիւնը ինքն իր աչքով է տեսնում, իսկ չը տեսածը նրա վրա աւելի թոյլ ազդեցութիւն է անում.»

—

Մեզ գրում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ հետևեալը։ «Այս օրերս գաւառիս Ջ. գիւղի բնակիչները դիմեցին գաւառապետին, յայտնելով որ ոչ ցանելու և ոչ ուտելու հաց ունեն, ոչ էլ, վերջապէս, անասունների համար դարման ունեն։ Նրանք աղաչում էին մի ճար անել իրանց անմխիթար վիճակին։ Այդ գիւղը բաղկացած է 84 տնից, որոնցից 40 տուն ունեն միայն ուտելու համար հաց (ցորեն կամ գարի), իսկ 40 տուն ոչ ուտելու և ոչ ցանելու հաց ունեն։ Մնում են միայն 4 տուն, որոնք թէ ուտելու և թէ ցանելու բաւականաչափ հաց ունեն։ Եւ այդ գիւղը բացառութիւն չէ կազմում գաւառիս գիւղերի թւում.»

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են, որ այդ քաղաքի շրջակայ գիւղերից մինի բնակիչը ոչ իր ընտանիքի և ոչ իր անասունների համար կերակուր չը գտնելու պատճառով, մորթում է վերջապէս իր անասուններին և կերակրում է իր զաւակներին առանց հացի, միայն մսով։

—

ՂԱՐԱԲՈՒԼԱՂ գիւղից մեզ գրում են։ «Մեր գիւղացիները, որոնք վերջին ժամանակները հաց չունենալու պատճառով, կերակրվում էին կորեկով, այժմ այդ էլ չունեն։ Եւ ահա, չը նայելով որ մեծ պաս է և լուծելը հայ գիւղացին սրբապղծութիւն է համարում, ստիպված է մորթել իր տաւարը և միսը ուտել։»

—

Ծերունի խաչօն կտրեց պ. Դուդուկչեանի խօսքը, ասելով.

—Ես հասկանում եմ, բոլորը հասկանում եմ, ինչ որ ասում էք դուք, բայց դարձեալ պիտի կրկնեմ նոյն խօսքը, որ մի բոպէ առաջ ասեցի.—միանգամով, մի օրվայ մէջ մի այսպիսի մեծ փոփոխութիւն չէ կարող կատարվել, որ մեր ժողովուրդը մի հրաչքով թողնէ իր ստրկական բնաւորութիւնը և հասկանայ, թէ ինչ բան է անձնապաշտպանութիւնը։ Դուք, պօլսեցիքդ, պէտք է վաղ սկսէիք այդ գործը. դուք պէտք է շատ տարիներ առաջ մեզ սովորեցնէիք, թէ ինչ բան է անձնապաշտպանութիւնը, և այսօր, քրիստոնեաների այժմեան պատերազմների ժամանակ, ձեր ցանած սերմերը ցանկալի պտուղ կը տային։ Դուք չը նախապատրաստեցիք մեզ։ Դուք ամբողջ ժամանակներ Պօլսում լուռ նստեցիք, և այսօր եկել մեզ ասում էք, թէ սուրը վեր առէք քրդի և թուրքի դէմ ձեր անձը պաշտպանեցէք։ Ո՞ւմ կարող էք հասկացնել, թէ դա կարելի բան է։

—Դուք իրաւ էք ասում, մենք, պօլսեցիքս ծոյլ և անհոգ գտնվեցանք, մենք չը նախապատրաստեցինք ձեզ, պատասխանեց պ. Դուդուկչեանը անխռով կերպով։—Բայց ես չեմ խօսում այն բանի վրա, որ այստեղ հայերը կորցրել են իրանց մարդկային բարձր, ազնիւ և վսեմ ձգտումները,—դրանք այնպիսի յատկութիւններ են, որ պահանջում են մի որոշ չափով կրթութիւն և զարգացում, և որոնց մատակարարելը մեր՝ պօլսեցիներիս պարտք էր։ Ես խօսում եմ անձնապաշտպանութեան վրա, դրա համար մեծ ուսում և կրթութիւն պէտք չէ։ Անձնապաշտպանութեան զգացմունքը, որպէս քանի բոպէ առաջ բացատրեցի, այնքան բնական է, որ յատուկ է մինչև անգամ բոյսերին, անասուններին և վայրենի մարդիկներին։ Մինթէ հայը անասուններից էլ ստոր է, մինթէ նա այն աստիճան մեռած է, որ քարի և փայտի նման ոչինչ զգացմունք չունի....

(Կը շարունակվի)

---

*) Քաղհան անել նշանակում է ցանքի միջից աւելորդ և վնասակար խոտարոյսերը արմատախիլ անել։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս եկաւ և Ծախվում է Կենտրոնական գրավաճառանոցում մի գրքոյկ՝ պ. Ա. Քիշմիշեանցի—«ԴՐՕՇՕ» և ԿՐԱԿԻ ՇՈՒՐՋԸ» վէպերով: Գրքոյկի գինն է երեսուն կոպ.: Բոլոր արդիւնքը յատկացրած է յօգուտ Վ. ԱՆԱՑ ՍՈՎԵԼՈՑ:

4—4

Въ Кавказскомъ Обществѣ Сельскаго Хозяйства въ Тифлисѣ имѣется для продажи яйчки шелковичныхъ червей французской породы, воспитанныя Барономъ Бахомъ, въ окрестностяхъ Тифлиса, по 35 коп. за золотникъ.

Иногородныя обращаются съ требованіями въ Общество съ препровожденіемъ слѣдуемыхъ денегъ, почтовыя расходы на счетъ Общества.

3—3

ՆԵՐԿԱՅ 1880 ԹՒՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ"

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է՝ ԳԱՒՈՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մըշակի» խմբագրատանը Յ. ՄԻՆԼԻՐ-ՅԱԿՈՐԵԱՆԻՆ:

Մամուլի տակից դուրս եկաւ գօկտոր Բօկի «Ուսումն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը: Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում: Գինն է 35 կոպ.

Պ. ԱԴԱՄԵԱՆԸ ցանկանում է ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ և գոյների բաղադրութեամբ ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ դասեր տալ: Պայմանների մասին կարելի է նրա հետ խօսել Նրա բնակարանում, Գոլովինսկի պրոսպէկտի վրա, Մուխրանսկու տանը, Կլուբի տակ, առաւօտները 10—12 ժամ, և երեկոները 5—8 ժամ: Դասերը կարող է տալ թէ իր բնակարանում և ցանկացողների տները այցելելով: Նոյնպէս ընդունում է պատուէրներ ԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ նկարելու համար:

5—10

Օրերումս գուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկ. գրավաճառանոցում:

1. Ադամեան—քերթուածք և թարգմանութիւնք. Տփխիս 1880 թ. գինն է 1 ր. 25 կ.:
2. Դօկտօր Բօկ—Ուսումն առողջապահութեան Տփ., 80 թ. — 35 կ.:
3. Ֆրէյդուն—Տաւիղ յիսնաղի Տփ. 80 թ. — 30 կ.:
4. Ղուկասեանց—ընդհանուր պատմութիւն հայոց դպրոցների համար, հ. ա. Տփ. 80 թ. — 80 կ.:
5. Դամառ-Ռաթիպայ — մանկական երգեր 80 թ. անկազմ — 15 կ.:
6. Նոյնը կազմած — 25 կ.:
7. Սիլվիո Փէլլիքօի Հռիմինիացին Փրանկիսկէ (Ֆրանչէսկա դա Ռիմինի). Դանտէի Ֆրանչէսկան, Լէօփարդիի առ Իտալիան. Տարօնոյ ծերը: Ա. Մ. Ե. Պ. Տփ. 80 թ. գինը է — 70 կ.:

7—10

Վաճառվում է նոր հրատարակված «Յիսնաղի Տաւիղ» Ֆրէյդունի գրքոյկը պ. Զ. Գրիգորեանցի և Կենտրոնական գրավաճառանոցներում: Գրքոյկի Գինն է 30 կ., գաւառներից ցանկացողները կարող են ուղղակի դիմել Պ. Յովհաննէս Սուզանաճեանցին հետեւեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственый домъ № 13.

1. Երգնկեանց քահանայ—Մանկական երգարան, երգեր և պար-երգեր ընդունված է Ներսիսեան և Գայանեան դպրոցներում. գինն է . . — ր. 20 կ.
2. Մեծատուն կանանց—Երգարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց . . . . . 1 ր. — կ.
3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց: Դիֆթերիա բողազաց . . — ր. 25 կ.
4. Բժիշկ. Գ. Տէր-Գրիգորեանց—Վարակիչ հիւանդութիւններ.

(Ծաղիկ, կարմրուկ, սկարլատին, բծաւոր տիֆ, անդրադարձ տենդ, դիֆտերիա, ընդհատ տենդ, խօլերայ, դեղին տենդ, որովայնատիֆ և ժանտախտ:)

Սոցա յատկութիւններն, ծագման և տարածման եղանակներն և նախապաշտպանողական միջոցներ:

Վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում:

8—8

Դուրս եկաւ մամուլի տակից և ԾԱԽՎՈՒՄ է թէ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ և թէ Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ գրավաճառանոցներում և պ. Ծատուրեանի խանութում «ՔԵՐԹՈՒԱԾՔ և ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ, պ. Ն. ԱԴԱՄԵԱՆԻ, հրատարակութիւն Ս. Արծրունոյ: Գիրքը բաղկացած է 243 ԵՐԵՍՆԵՐԻՑ: Գինն է 1 ր. 25 կ.:

4—5

Փետրվարի 12-ից ԲԱՑՎԵՑ Իչան ՍՈՒՄԲԱՏՕՎԻ տանը ԿՕՆԴԻՏԷՐԻ և ՀԱՑԱՐԱՐԻ (пекарня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրովը, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կօնֆէտներ արժան գնով. թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ: Օտար քաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОИ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Պատուէրները կը կատարվեն ամենայն ճշդութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեզ վրա առնելով. կօնֆէկտների գինը ֆունտը 40 կոպէկից մինչև 1 ր.:

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ, որ վկայական ունի և գիտէ ՌՈՒՍԱՑ, ՖՐԱՆՍԻԵՐԷՆ և ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուները, դասեր է տալիս: Հասցէն Կամենդանտսկայա փողոց, տուն Շախմուրադովի № 23:

2—4 (2)

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրօվ վիներական և բողազի հ., Բէյլս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադօվ, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ Բուդկօվսկի ներքին հ., Շտէյմբօրսկի վիներական և կաշու հ., Ասատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրօվ վիներական և բողազի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադօվ և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Ասատվածատուրօվ վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբօվ կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ ազքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առանձնաբոյժ Օբրեխտ ազքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ОТЪ РАСПОРЯДИТЕЛЬНАГО КОМИТЕТА

Тифлисскаго Благотворительнаго ОБЩЕСТВА

Объявляется, что копѣечный сборъ будутъ производить въ текущемъ великомъ посту по городскимъ участкамъ: въ 1-мъ А. Е. Фролова, во 2-мъ княгиня Е. А. Гагарина и А. И. Руманская, въ 3-мъ О. А. Томичъ и Е. Н. Иванова. въ 4-мъ В. Я. Опочинина (участокъ бывшій княгини С. Я. Святополкъ-Мирской), въ 5-мъ княгиня М. Г. Меликова, въ 6 и 8-мъ княгиня В. Г. Баратова, въ 7-мъ С. П. Красноглядова и О Н. Чукмасова, въ 6-мъ княгиня О. Д. Барятинская, въ 10-мъ Фон-деръ-Нонне.

Дамы, принявшія на себя трудъ копѣечнаго сбора, будутъ ходить въ сопровожденіи околодочныхъ надзирателей.

На кружкахъ имѣются печатныя надписи на русскомъ, грузинскомъ и армянскомъ языкахъ.

(131) 2—2.

Անանովի քարվանսարան այրվելուց յետո, նորից բացված է խստակ մոմի առևտուր Սիմոնեան փողոցում Արծրունու քարվանսարայում № 14. իւրաքանչիւր շաբաթ ստացվում է նոր շինուած խստակ մոմեր իմ սեփական զավոդից և որոնք վաճառվում են էժան գներով. խնդրեմ գնողներին չը թողնել իրենց այցելութիւնները:

Յովհաննէս Կուրծեան

4—4

Տպագրութեան համար պատրաստ են. «Դոն Կարլոս» (հետաքննութիւն ճշմարտութեան) Պրէսկոտի, «Աբրահամ Լինկոլն՝ ստրուկներին ազատող» Վիլհելմ Հոֆմանի, և Մոլիէրի «Ամուսնացողներին խրատ» հայ թարգմանութիւնները:

Թարգմանվումեն Մոլիէրի հետ «Տարտիւֆ կամ Կեղծաւոր» և «Կեղծ հիւանդ» կատակերգութիւնները:

Անցած փետրվարի 17-ից նօտարական ակտով վերջացնելով բոլոր դրամական հաշիւները իմ առևտրական ընկերակցութեան վերաբերութեամբ Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ՍԵՐԳԵՑ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ ԼԱԶՐԵՎԻ հետ, սրանով յայտնում եմ, որ եթէ մի որ և իցէ մարդու մօտ կը գտնվեն ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՑ ԹԻՒԸ, իմ նրան տուած տոմսակներ (росписки) մասնաւոր և բանկային վէքսէլներ, և բոլոր ուրիշ պարտամուրհակներ և ակտեր, ես անուավեր եմ համարում և ինձ պարտաւոր չեմ համարում վճարել:

Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ԴԱՆԻԷԼ ԱՐՏ. ԱԼԱՎԵՐԴՈՎ:

Дозволено Цензурою 24 Марта 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона